asce group

հայկական պողպատձուլական ձեռնարկություն „ԱՍԿԵ գրուպ" ԲԲԸ
армянское сталелитейное предприятие „ACKE груп" ОАО
armenian steel casting enterprise „ASCE group"OJSC

49/01

01 հուլիս 2020թ.

Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

Ղեկավարվելով <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են <<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ www.asce.am:

Առդիր՝ 6 թերթ:

Տնօրեն՝ Խ. Անտոնյան

2501 ՀՀ ք. Չարենցավան, Երևանյան 2, 2501 РА г Чаренцаван, Ереванян 2, str. Yerevanyan2, Charentsavan, RA 2501
Tel/հեռ: (+374 226) 46427 fax/ֆաքս: (+374 226) 44287 E-mail asce@asce.am www.asce.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
« ԱՍԿԵ ԳՐՈՒՊ » ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Կոտայքի մարզ, ք, Չարենցավան 29. 06. 2020թ. ժամը 13^{00}

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ » ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկա են 7 865 480 ձայնի իրավունք ունեցող բաժնետերերից 7 764 045 ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր:

Այսպիսով, ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկա են ընկերության բաժնետոմսերի 98.71 % ներկայացնող բաժնետերերը՝ քվորումն ապահովված է և ժողովը համարվեց բացված:

Ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանի առաջարկությամբ ժողովի քարտուղար ընտրվեց Ն. Ավագյանը:

Ժողովի մասնակիցներին ներկայացվեց հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1. Լաուրա Բառբառյան
2. Մարգո Ավետիսյան
3. Լյուդմիլա Ալեքսանյան

Առաջարկն անցավ միաձայն և ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովին հետևյալ կազմով՝

1. Լաուրա Բառբառյան
2. Մարգո Ավետիսյան
3. Լյուդմիլա Ալեքսանյան

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ՝

1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների հաստատում
2. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն
3. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2020թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն
4. « ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ համար ֆինանսական միջոցների ներգրավում
5. « ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատում

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը ձայնը տվեց գլխավոր հաշվապահ տիկին Կ. Մամիկոնյանին: Վերջինս նշեց, որ տարեկան արդյունքներով Ընկերության հասույթը կազմել է - 9 529 245 հազ.դրամ, իրացված արտադրանքի ինքնարժեքը կազմել է- 7 668 973 հազ. դրամ, վարչական և իրացման ծախսերը կազմել են – 233 554 հազ. դրամ:

Սեփական կապիտալի կառուցվածքը հետևյալն է՝

Կանոնադրական կապիտալ – 1 179 822 հազ. դրամ

Կուտակված շահույթ (վնաս) - (4 294 397) հազ. դրամ

Այսպիսով, սեփական կապիտալը հաշվետու տարում կազմել է - 537 002 հազ.դրամ: Ընկերությունը 2019թ-ին աշխատել է շահույթով, որը կազմել է- 938 971 հազ.դրամ:

Ընթերցվեց վերստուգող հանձնաժողովի և « ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունները:

Ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը ներկայացրեց 2019թ. կատարված աշխատանքները և հետագա անելիքները:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ժողովը որոշեց՝

1.1 . Հաստատել վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը:
1.2. Հաստատել աուդիտն իրականացնող անձ «ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից տրված աուդիտորական եզրակացությունը
1.3. Հաստատել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2019թ-ի տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը և շահույթը 938971 հազ. դրամի չափով, որը ուղղվում է նախորդ տարիների վնասների փակմանը:
1.4. Ի գիտություն ընդունել տնօրենների խորհրդի և տնօրինության աշխատանքների արդյունքները և այն գնահատել բավարար;

(կողմ – 7 764 045 ձայն , դեմ և ձեռնպահ ձայներ չկան)

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը, որը ներկայացրեց ընկերության տնօրենների խորհրդի կողմից ժողովի հաստատմանը ներկայացված 4(չորս) հոգուց տնօրենների խորհուրդը հետևյալ կազմով՝

1. Միխաիլ Հարությունյան
2. Խաչատուր Անտոնյան
3. Վազգեն Նիկոլյան
4. Դավիթ Յավրույան

Նշվեց նաև, որ Միխաիլ Հարությունյանը, լինելով բաժնետեր, ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ ուղղակիորեն տիրապետում է Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, այդ իսկ պատճառով նա «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընդգրկվում է Ընկերության տնօրենների խորհրդի կազմում առանց ընտրության, այդ իսկ պատճառով նրա անունը բացակայում է քվեաթերթիկում:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ժողովը որոշեց՝

2.1. Հաստատել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տնօրենների խորհրդի կազմը 4(չորս) հոգուց

(կողմ – 7 764 045 ձայն , դեմ և ձեռնպահ ձայներ չկան)

2.2. Հաստատել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամներին հետևյալ կազնով՝

Միխաիլ Հարությունյան – առանց ընտրության

	կողմ	դեմ	ձեռնպահ
Խաչատուր Անտոնյան	- 7 764 045 ձայն	ձայն չկա	ձայն չկա
Վազգեն Նիկոլյան	- 7 764 045 ձայն	ձայն չկա	ձայն չկա
Դավիթ Յավրույան	- 7 764 045 ձայն	ձայն չկա	ձայն չկա

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը:Նա ներկայացրեց, Տնօրենների խորհրդի կողմից « ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2020թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ առաջադրված, «Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ թեկնածությունը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ժողովը որոշեց՝

« ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2020թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ ընտրել «Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ

(կողմ – 7 764 045 ձայն , դեմ և ձեռնպահ ձայներ չկան)

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը: Արտադրության աշխատանքները ավելի լիարժեք կազմակերպելու համար, նա առաջարկեց ֆինանսական միջոցներ ներգրավել:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ժողովը որոշեց՝

Թույլատրել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ֆինանսական միջոցներ ներգրավել

(կողմ – 7 764 045 ձայն, դեմ և ձեռնպահ ձայներ չկան)

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ ժողովի նախագահ պարոն Մ. Հարությունյանը: Ելնելով այն հանգամանքից, որ «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքում կատարվել են որոշ փոփոխություններ, նա ներկայացրեց կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և առաջարկեց հաստատել « ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ժողովը որոշեց՝

Հաստատել « ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

(կողմ – 7 764 045 ձայն , դեմ և ձեռնպահ ձայներ չկան)

Ժողովի նախագահ՝ Մ. Հարությունյան

Ժողովի քարտուղար՝ Ն. Ավագյան

ԱՍԿԵ ԳՐՈՒՊ
ASCE GROUP
02800538

2020թ. հուլիսի 01-ին, ժամը 10:00-ին ք. Չարենցավանում (Երևանյան 2 հասցեում) կայացած <<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲԸ-ի Խորհրդի նիստի արձանագրություն N5

Նիստին մասնակցեցին՝

Խորհրդի նախագահ՝ **Միխաիլ Հարությունյանը**

Խորհրդի անդամներ՝ **Խաչատուր Անտոնյանը,**
Վազգեն Նիկոլյանը,

Խորհրդի անկախ անդամ՝ **Դավիթ Յավրույանը**:

<<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲԸ-ի կանոնադրության և ՀՀ օրենսդրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, Խորհրդի նիստն իրավասու էր:

Խորհրդի նիստի քարտուղարը ներկայացրեց նիստի օրակարգը: Միխաիլ Հարությունյանը նշանակվեց խորհրդի նիստի նախագահող:

Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը՝

ՕՐԱԿԱՐԳ՝

- <<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից <<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) մինչև 10 (տասը) տարի ժամկետով և մինչև 15 000 000 000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ գումարի կամ համարժեք արտարժույթով սահմանաչափի (այսուհետ՝ **Սահմանաչափ**) շրջանակներում Ընկերության կողմից Բանկից մինչև ____.07.2022թ ժամկետով և տարեկան առավելագույնը Բանկի հաշվարկային տոկոսադրույքին գումարած 1.5% (մեկ ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տոկոսադրույքով (որից 11%-ը (տասնմեկ տոկոսը) ենթակա է սուբսիդավորման ՀՀ կառավարության 2020թ.-ի մարտի 26-ի թիվ 355-Լ որոշմամբ և ի փոփոխումն դրա ընդունված 2020թ մայիսի 12-ի թիվ 725-Լ որոշմամբ նախատեսված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման (այսուհետ նաև՝ Օժանդակության միջոցառումներ) շրջանակներում իրականացվող օժանդակության փաթեթի շրջանակներում), առավելագույնը 250 000 000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ գումարի վարկի (այսուհետ՝ **Վարկային ծառայություն**) ստացման և ապահովման հարցը՝ համաձայնվելով, որ Օժանդակության միջոցառումների շրջանակներում սուբսիդավորման տրամադրման մերժման կամ սուբսիդավորումը որևէ հիմքով դադարեցվելու դեպքերում Վարկային ծառայության նկատմամբ գործելու են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից սահմանված պայմանները:

Առաջարկվեց հաստատել՝

- Ընկերության կողմից Բանկից **Սահմանաչափի** ներքո **Վարկային ծառայության** ստացումը և ապահովումը:

Վարկային ծառայության ապահովման նպատակով՝

- Հաստատել **Սահմանաչափի** ապահովման նպատակով Բանկի օգտին արդեն իսկ գրավադրված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Երևանյան փողոց, թիվ 2 հասցեով անշարժ գույքի գրավը,

Ինչպես նաև **Վարկային ծառայության** ապահովման նպատակով առաջարկել՝

- ՀՀ, Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Երևանյան փողոց, թիվ 2 հասցեում տեղակայված՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող արտադրական հոսքագծերը և այլ հիմնական միջոցների գրավ՝ համաձայն Հավելված 1-ի,
- Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող CVS մակնիշի մետաղի հալման էլեկտրաաղեղային վառարանի գրավ՝ համաձայն Հավելված 2-ի:

Խորհրդի նիստի օրակարգում նշված հարցը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները օրակարգում ներառված հարցի վերաբերյալ քվեարկեցին հետևյալ կերպ.

Խորհրդի նախագահ՝ **Միխաիլ Հարությունյանը՝** կողմ

Խորհրդի անդամներ՝ **Խաչատուր Անտոնյանը՝** կողմ

Վազգեն Նիկոլյանը՝ կողմ

Խորհրդի անկախ անդամ՝ **Դավիթ Յավրույանը՝** կողմ:

Որոշեցին նաև այս կապակցությամբ հանձնարարել ընկերության տնօրեն Խաչատուր Անտոնյանին ընկերության անունից ստորագրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Արձանագրությունը կազմվել է ք. Չարենցավանում (Երևանյան 2 հասցեում), 2020թ. հուլիսի 01-ին:

Խորհրդի նախագահ՝ Միխաիլ Հարությունյան _____
ստորագրություն

Խորհրդի անդամներ՝ Խաչատուր Անտոնյանը _____
ստորագրություն

Վազգեն Նիկոլյան _____
ստորագրություն

Խորհրդի անկախ անդամ՝ Դավիթ Յավրույան _____
ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 1
<<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲԸ խորհրդի՝ 01.07.2020թ. նիստի արձանագրության

N	Սարքավորումների անվանումները
1	Գլոցման հաստոց (Siemens)
2	2 առվականի ՆԱԶՄ (Siemens)
3	ԴՍՊ-12 ն3 էլեկտրական աղեղային վառարան N2
4	ԴՍՊ-12 ն3 էլեկտրական աղեղային վառարան (N1)
5	Նախապատրաստվածքների անընդհատ ձուլման մեքենա կ-տ
6	Շերեփ վառարան կ-տ
7	ԴՍՊ-12 ն3 էլեկտրական աղեղային վառարան (N3)
8	Օդի բաժանման կայան հեղուկացրման եղանակով (կոմպլեկտ)
9	Հոսքային գիծ ԱՖԱ 30
10	Ավտոմատ գիծ "Մուլտոմաիկ" 0.5 (ԳԴՀ)
11	Հորիզոնական կտրող հիդրավլիկ մկրատ
12	110ԿՎ ՕԳ Զուլարան ենթակայան
13	Հոսքային գիծ ԱՖԱ 30
14	Թթվածնային ենթակայան
15	Կամրջակային կռունկ 32/5 բ/բ

Հավելված 2
<<ԱՍԿԵ ԳՐՈՒՊ>> ԲԲԸ խորհրդի՝ 01.07.2020թ. նիստի արձանագրության

Հ/հ	Անվանումը	Քանակը /հատ/	Արտադրման տարեթիվը	Ծագման երկիրը
1.	EAF-ELECTRIC ARC FURNACE	1	2016	Թուրքիա
2.	CCM-TURRET	1	2016	Թուրքիա
3.	EAF ELECTRICAL AND AUTOMATION WITHOUT TRANSFORMER AND REACTOR	1	2016	Թուրքիա
4.	LF ROOF WITH ACCESSORIES	1	2016	Թուրքիա
5.	FTP REVISION	1	2016	Թուրքիա
6.	40 MVA TRANSFORMER WITH REACTOR	1	2016	Իտալիա